Հարցում

ԿԳ նախարար Ա. Հարությունյանին

Դավիթ Լևոնյանից

Հարգելի պրն Ա. Հարությունյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություն, թե որքան գումար է նախատեսվել 2019 թվականի պետբյուջեից ՀՀ դպրոցների վերանորոգման/հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով և որ դպրոցներում է նախատեսված հիմնանորոգում/վերանորոգում իրականացնել 2019 թվականի ընթացքում:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30- օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ: